



ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ

ՔԱՅՆՈՐԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Պարսկաստանի համար տարեկան 5 Փր. և կամ 2 րրլ.ս. թղթերով. Ռեդիչ ամեն տեղի համար ուր այս լրագրի մուտքը արգելուած չէ, տարեկան բաժնորդագրին է 20 Փր., վեցամսեայն 10 Փրանդ և եռամսեայն 5 Փրանդ:

Բաժնեգրիները կանխիկ կը վճարուին և Տնօրէնութիւնն ինք կը փնարէ լրագիրը զրկելու փոստի ծախքը:

Նամակ և ծրար պէտք է զրկել հետևեալ հասցէով. M. PORTOUKALIAN, rédacteur du journal Arménia. MARSEILLE (France)

Է ՏԱՐԻ ԹԻՒ 85

1892 ՅՈՒՆԻՍ 15

ՅՈՒՆԻՍ 3 (Հ.Տ.)

ՉՈՐԲԵՄԱՐԹԻ

Կը հրատարակուի Գ. Ե. Թ. օրեր

ՊԱՅՄԱՆՆԵՐ

Խմբագրութիւնը, եթէ հարկ համարի, համառօտելով և կամ մասամբ միայն կը հրատարակէ իրեն զրկուած գրութիւններն: Պարտաւոր չէ վերագրածուենէլ հրատարակուած ձեռագիր րն: Գանուցումներ կընդունուին հայերէն և ֆրանսերէն լեզուով: Գանուցման 1 միջակ գիրը 1 ամսիկ կարծէ. 1 գլխագիրը 2 ամսիկով:

Les annonces, en français et en arménien, sont reçues aux bureaux de Rédaction (Allées de Meilhan, 44.)

Հ Ա Յ Ո Ց
Հ Ա Յ Ր Ե Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն
Մ Ի Ռ Ո Ւ Թ Ի Ն

==

Ն Պ Ա Տ Ա Կ ԵՒ Մ Ի Ջ Ո Ց Ն ԵՐ

Բարգաւաճ Կանոնագրեմ)

« Հայոց Հայրենասիրական Միութեան » նպատակն է աշխատել վարչական բարենորոգումներ մտցունելու թիւրքահայաստանի մէջ, հայ ժողովրդի տեղական պետքերին համեմատ Հայ ժողովրդի ցանկութիւնն է իրաւունք ստանալ ազատորէն ինքզինք կառավարելու որով միայն պիտի կրնան վերնալ այն հարստահարութիւններ որոնք այսօր Հայաստանի թշուառութեան և աւերակ դառնալուն պատճառ կը լինին:

« Հայոց Հայրենասիրական Միութիւն » իւր նպատակ իրագործելու համար իւր կարողութեան չափով կը գործադրէ ամեն յարմար եղած միջոցներն, ժամանակի պահանջներին համեմատ. կաշխատի ներքին ոյժ գոյացունել Աղլին մէջ իւր ազատութեան համար, հրատարակութիւններ կանէ, դիմումներ կանէ որոց որ պէտք է և նիւթապէս ու բարոյապէս կը քաջալերէ անոնց որոնք անձնակերպութեամբ կաշխատին հայրենիքի ազատութեան գործին:

Միութիւնը կանխնայ իրեն բերան եզող լրագիրը, բացի զանազան լուրեր տալէ իրբեւ լրագիր, կը հազորդէ ընդհանրութեան ինչ որ Միութիւնը ուզէ հազորդել, անգեկութիւններ կուտայ Հայաստանի և տարաբնակ Հայերի գրութեան վրայ և կը ծառայէ հայրենասիրական եռանդը արծարծելու Հայերին մէջ: (*)

Մանօր. « Հայոց Հայրենասիրական Միութեան » անդամակցել կամ թղթակցել ուղղորդելու պէտք է դիմեն հետևեալ հասցէին:

M. Portoukalian
(FRANCE) Marseille

(*) « Հայոց Հայրենասիրական Միութեան » կը նպատակ Արմենիա լրագրի հրատարակմանը:

ԲՈՎԱՆ ԳԱԿՈՒԹՅՈՒՆ

Շնորհաւորութիւններ Ամեն Ս. Հայրիկին. — Կարողիկոսական ընտրութեան արձանագրութեան ներկայացուիլը. — Թիւրքիայի Հայերի պատգամաւորների վերադարձը. — Սանատարեանի հոգեհանգիստը. — Մուշի ապստամբութեան լուրը. — Ռուսադոզի ուսմբերի խնդիրը. — Նոր հրատարակութիւններ. — Կաղզուան բանտարկուած Հայերի դատաստանը. — Բարդուաճեթի անգլիական «Կապոյտ տետրակ»-ն. — Գանուցումներ. — Բանասիրական (Երեսներ իմ յիշատակարանից):

ՇՆՈՐՀԱՍՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՄԵՆ. ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԵՆԵՐ

Եզրկատուէն մեզ կը հաղորդեն թէ Հայրիկի կաթողիկոսական Ա. ընտրելութեան լուրը այնտեղ հասածին պէս մեծ ցնծութիւն պատճառեր է ամբողջ Հայ ժողովրդին մէջ և մի խումբ Հայեր փութացել են հեռագրել Երուսաղէմ Ամեն Ս. Հայրիկին, իրենց եռանդակ շնորհաւորութիւններ մատուցանելու համար որդիական ամենախորին յարգանքներով:

Կիմանանք թէ մինչև մայիս 12/24 շնորհաւորական 53 հեռագիր հասած

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ԵՐԵՎԱՆԻ ԻՄ ՅԵՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ
(Շար. 84ր բուհն)

Բ

Մայիս 20

Մի երկրորդ հարց էլ եկաւ աւելանալու առաջինի վրայ: Ինչո՞ւ համար է որ վեց տարի առաջ տեսածս վանեցի Պետրոսը միշտ նոյն փողոցներում հաց ծախողն է մնացել:

Վեց տարի առաջ ես նրան ճանաչում էի երբ ամեն առաւօտ դալիս էր իր ահագին սակառը ուսին ձգած. լուսամուտին մօտենալուց առաջ «գեարեալի բուլկի» (1) էր գոռում զիլ ձայնով և յետոյ ձեռում էր լուսամուտս:

— Բուլկի չէ՞ ուզել, հարցնում էր նա բարձր ձայնով:

Սակառը գետին էր դնում, սրբում էր թեւով ճակատի քրտինքը, մի խոր հառաչք արձակում, լուսութեամբ տալիս էր բուլկին, փողը ստանում, կռանում շալակում էր սակառը և հեռանում էր գոշելով միշտ:

— Գարեալից բուլկի, պէ՛տի բուլկի... (2):

- (1) Տաք հաց:
- (2) Տաք հաց, նոր հաց:

է Երուսաղէմ, որ ասել է օրական գրքէթէ 7 հեռագիր: Մեծ մասը Ռուսիայէն են. աղոնցմէ մին 150 բառով: Կ. Պոլսէն շնորհաւորական 2 մասնաւոր հեռագիրներ միայն զնացած են այդ շաբաթի մէջ, որ այնու ամենայնիւ ապացոյց է թէ Բ. Գուռը յատուկ մի արգելք չէ դրած հեռագրելուն դէմ. ուստի զարմանալի է որ Ալըքեանը եթէ ոչ իբրեւ Պատրիարք, գէթ իբրեւ մի քաղաքավար մարդ պարտքը կատարելուն մէջ անհիոյթ գտնուած է:

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅՈՒՆԻՐ

Ս. Էլմիսանի Համազգային Ընտրողական Ժողովին կողմէն 3 անձէ բաղկացած մի պատգամաւորութիւն, որք էին Շամսիի Առաջնորդ Գեր. Մեհրապ Արքեպիսկոպոս Սմբատեան, Պրուսայի պատգամաւոր Պր. Արզար Յովհաննիսեան և Պարսկա-Հնդկաստանի պատգամաւոր Պր. Համբարձում Առաքելեանց, մայիս 17/29ի կիրակի

Երիտասարդ էր, հազիւ 20 տարեկան, առողջ և ոչ յիմար. Վանի մի ուսումնարանից էլ աւարտել էր. լաւ հայերէն էր լուսում և քիչ չէր պատահում լսել նրա բերնից խեղճ մտքեր:

Եւ ահա վեց տարից յետոյ երբ ես թիֆլիզ եկայ, մի առաւօտ (որանից 10 օր առաջ), հիւրանոցիս լուսամտի տակ լուսեց մի զիլ ձայն, որ գոչում էր

— Սիլժի բուլկի...:

Վեր եմ թռնում նստած տեղիցս. ձայնը ինձ ծանօթ է գալիս. բաց եմ առնում լուսամուտը. բաց անելու ձայնից շարժուած, ծախողը կանգ է առնում, գրկուր բարձրացնում և հարցնում է հայերէն:

— Բուլկի չէ՞ք ուզում, պարո՞ն:

Նա ինձ երեւի չը ճանաչեց (մտածում էի ես). և միթէ՞ կարող է ճանաչել վեց տարուայ մէջ հազարաւորների է տեսել:

Նա չեմ կարողանում իսկոյն պատասխանել, ճանաչելով իմ բուլկի ծախողին — Վանեցի Պետրոսին. այո՞, նա է. այժմ մի քիչ աւելի կանոնաւոր հազնուած, երեսը աւելի մաքուր, մօրուքը նոր գերածած, կօշիկը ներկած, գլխարկը նոր և աջ ձեռքի ձկոյթի վրայ էլ մի մատանի ունի...:

Տեսնում էք Պետրոսիս. ինչպէ՞ս ֆըրանս դարձել, Բայց ուսի վրայի մեծ սակառը, բայց նրա միշտ նոյն արհեստը... միթէ՞ Պետրոս վեց տարուայ մէջ

օր ներկայանալով կողկասի կառավարչապետի օգնական Կոնս Տատիչիւնի (Պր. կառավարչապետը բացակայ է), յանձնած է կաթողիկոսական ընտրութեան արգելքը ցոյց տուող օրագրիւրը, Ռուսիայի կայսրի բարձրագոյն հաճութեանը ներկայացունելու համար, որ Պալատիկի համեմատ իրաւունք ունի երկու ընտրելիներէ մին որոշել իշխմանի կաթողիկոսական Աթոռին համար:

Գեր. Սմբատեան Արքեպիսկոպոսը իրենց տեսակցութեան արգելքը հազորդելով թիֆլիսի Առաջնորդաւանին մէջ, աւետած է որ մեծ յոյս ունի թէ պիտի կատարուի ազգի ցանկութիւնը որ Համազգային Ընտրողական Ժողովին մէջ միաձայնութեամբ յայտնուած է:

ԹԻՒՐԳԻՍԻ ՀԱՅՐԵՐ
ՊԱՏՄԱՍԻՈՐՆԵՐԻ ՎԵՐԱԳՐՈՒՄ

Կաթողիկոսական ընտրութեան համար թիւրքիական Էլմիսանի զրկուած պատգամաւորները հետզհետէ

այնքան յառաջդիմեց, որ միայն կարողացաւ հագուստը նորոգել, մօրուքը քերծել և մատանի ունենալ... ո՛չ, այդ տարօրինակ բան է:

Եւ ես վեր կանչեցի Պետրոսին:

Նա մտաւ բազը, բարձրացաւ պատըշամի վրայ, եկաւ սակառը գրեց գրուանս առջեւ, գլխարկը հանեց և ասաց.

— Ի՛նչ տեսակ բուլկի կուղէք:

Նա նայում էի նրան. այո՞, սխալ չէր, դա Պետրոսն էր, նոյն շիլ աչքերը, նոյն լայն ընչացքը և հաստ ետ ծալուած ցածի շրթուքը. նոյն ձայնը:

— Պետրո՞ն, ասացի ես. միթէ՞ ինձ չես ճանաչում:

Նա գլխարկը գրեց գլխին, ստացաւ մի խորամանկ ժպիտ և չորութեամբ պատասխանեց.

— Ի՞նչպէս չէ, պարո՞ն, գուր մեր հայրենակիցն էք, որ վեց տարի առաջ բուլկի էիք առնում ինձինց. ես ձեզ ցածրից էլ կարողացայ ճանաչել, մի քանի օր առաջ էլ մի քանի անգամ հանդիպեցի ձեզ. նայում էիք երեսիս ու անցնում. քէ՛, ի հարկէ, մենք մի բուլջոյնի մարդ...:

— Այդ ի՞նչ է, ծիծաղեցի ես, խորամանկ քաղաքավարութիւն էլ ես սովորել, եթէ տեսար և ճանաչեցիք, ինչո՞ւ չը մօտեցար:

Պետրոսը չը պատասխանեց, լուսութեամբ կռացաւ, հացերը ծածկող շորը ետ քա-

կը վերադառնան. Չմիտնի Առաջնորդ Գեր. Երեսէս Վ. Այլանեան և Կ. Պօլսի պատգամաւոր Մեծ. Տիգրան Էֆ. Կիւմիւշէրտան որոնք Բագու գնացած էին նաւթահորերը տեսնելու և մի քանիներ որոնք Էջմիածնէն գնացած էին Անիի աւերակները այցելել, նոյնպէս վերադարձած են շուտով:

Թիֆլիսի լրագիրներին մէջ կը կարդանք Բաթումէն գրուած հետեւեալը.

«Մայիսի 12ին (24), ժամը 4ին Բաթումից Ալէքսանդր Մանթաշեանի «Մարգա» շոգենաւով գէպի Կ. Պօլսու ճանապարհ ընկան Թիւրքահայ պատգամաւորներէց ութ հոգի, որոնց թւումն էին Գեր. Մարգարիտ Օրմանեան և Ստեփաննոս Կախկոպտանբը: Մանթաշեանցի «Մարգա» և «Գրանվիլ» շոգենաները զուգակից կանգնած էին սեպհական նաւամատոյցի մաս և զարդարուած էին գոյնզգոյն գրօշակներով. բարձրացած էր Թուրքաց կիսալուսին կարմիր դրօշակը և իւր՝ Ա. Մանթաշեանի կանաչագոյն գրօշակը ամենից բարձր, վերան Աստուծոյ գառը նկարած և վերին ու ներքին կողմերում հայերէն մեծ մեծ տառերով իւր ազգանունը գրուած: Գեր. Սրբազաններին և Պ. Պ. պատգամաւորներին բարիբախտ մագթիւր համար ի միջի այլոց եկել էր Թուրքաց Հիւպատոսը իւր քարտուղարի հետ և հասարակութեան ինտելիգենտ մասը:

Պատգամաւորները մինչև Կ. Պօլսու ուղեւորում են, Պ. Ա. Մանթաշեանցի կարգադրութեան համաձայն, ձրի:

«Գրանվիլ» շոգենաւով Պօլսու են ուղեւորուելու մնացած պատգամաւորները, ի թիւս որոց և Գեր. Սահակ Կախկոպտոս խապայեանը:

ՍԱՆՏՈՒՆԵՆԻ ՀՈԳԵՆԱԳԻՍՏՐ

Մայիս 17/29ի կիրակի օր, աղբալին բարեբար Մկրտիչ Մանասարեանի մահուան երկրորդ տարեդարձին առթիւ հոգեհանգստեան պաշտօն կատարուած է Թիֆլիսի վանքի Մայր-

- չեց, հանեց մի հաց և հարցրեց. — Ս.յ տեսակ բուրի էք կամենում պարոն:
- Ներս մտի՛ր, ասացի ես պատասխանի փոխարէն. ուզում եմ մի քիչ խօսել քեզ հետ:
- Ինձ հե՞տ, պարոն:
- Յ.յո՛ւ. հայրենիքից եմ գալիս. միթէ՞ չես ուզում նոր լուրեր իմանալ:
- Հա՞, գոչեց նա մի ուրախ շարժումով և վազեց գէպի ինձ. բայց յանկարծ կանգ առաւ, ետ քաշուեց, ուղեց իրեն և նախկին խոսարհ կերպարանքը ստանալով յարեց սառնութեամբ.
- Ներեցէ՛ք, պարոն... դեռ շատ տեղ բուրի ունեմ տարու:
- Ու մի զսպուած հառաչք արձակեց: Ի՛նչ էր պատահել Պետրոսի հետ, ես իսկոյն չը կարողացայ հասկանալ: Նրա նախկին կոշտ անկեղծութիւնը փոխուել էր քծնողական քաղաքավարութեան. դէմքի վրայ, իր նախկին անկեղծ քրքրելիքի փոխարէն, երեւում էին այժմ դառն ծիծաղներ. ազատ շարժուածքները սեղմուել էին և ստացել իր կաշուի

եկեղեցուն մէջ: Կարինի Առաջնորդ Գեր. Գեորգ Կախկոպտո Շիշմանեան որ Էջմիածնէն գէպի կարին կը վերադառնար, ինք մատուցած է նոյն օր պատարագը և քարոզ խօսած է ի յիշատակ Մանասարեանի որի շնորհով մի հոյակապ վարժարան կայ հաստատուած այժմ Հայաստանի մայրաքաղաքին մէջ: Հոգեհանգստին ներկայ գտնուած են նաեւ Կարինի և Մուշի պատգամաւոր Տիգր Կարապետ Տէր-Ազարեան, Կարինի նախորդ և Եգիպտոսի այժմեան Առաջնորդ Գեր. Գեորգ Մ. Վ. Իւթիւճեան, Կեսարիաի Առաջնորդ Գեր. Տրդատ Մ. Վ. Պարեան, Կեսարիաի պատգամաւոր Տիգր Եւսէբ, բարձում Մոստիչեան իւր նրբտապարդ որդու հետ կային:

ՄՈՒՇԻ ԱՊՍՏՄԱՐՈՒԹԵԱՆ ԼՈՒՐԸ

Տէյի Նիշուրն Աթէնքէն իր թըղթակցի տուած հեռագրաւորը թէ Մուշի և Մատուշի մէջ ապստամբութիւն ծագեր և թիւրք զօրքերն յաղթուած լինելով՝ ապստամբական շարժումն ընդհանրացեր է (տեսնել Արմենիա թիւ 83), այդ կողմերէ մեզ հասած վերջին տեղեկութիւնները չեն հաստատեր դժբաղդապէս: Այդպիսի սխալ լուրերի տարածումը ոչ միայն չօգնէր գործին, այլ և կրնայ վնասել:

Մեզ հասած ստոյգ տեղեկութիւններէ կիմանանք որ թիւրք կառավարութիւնը այդպիսի ընդհանուր ապստամբութիւն պատրաստուած լինելու սուտ լուրը պատրուակ բռնելով, Մուշի գաւառէն հարեւաւոր անմեղ բայց իրենց հարստութեամբ և կամ ուեէ յատկութեամբ աչքի դարձող Հայեր ձեռքակալեր է որոնցմէ ոմանք Կ. Պօլսու բերուած բանտարկուած են դեռ և ոմանք ալ աքսոր գրկուած:

Ռուսաւորի տուրքերի խնդիրը

Ռուսուղէն մեզ հասած վերջին տեղեկութիւնները կիմացունեն որ ռուսների խնդրին պատճառով բանտարկուած Հայերն՝ որոց անմեղութիւն հաստատուելով արձակուած էին,

- մէջ չը գտնուող քաղաք ընկած մի գիւղացու շարժուածքների բռնաբարոսի դիրք և կեղծ քաղաքավարութիւններ, որ այնքան չէ սողում մեր գիւղացուն.:
- Ահա այժմեան Պետրոսը: Վեց տարի էր անցել, բուրջնիկը միտ բուրջնիկ էր մնացել, իսկ փոփոխութիւնները միայն հազուադէպ և շարժուածքներ մէջ էին յայտնուում. . . . այդպէս էր թւում ինձ. . . ունեցած քիչ ու շատ անկեղծ յատկութիւններն իսկ կորսուել էին. . . .
- Այդ ի՞նչ է, Պետրո՛ս, ասացի ես. միթէ՞ չէիր ցանկալ հայրենիքիցը լուրեր լսել, նրա մասին հարցուփորձ անել, միթէ՞ այդքան սառել ես արդէն:
- Այի ցանկանա՛լ. . . ինչո՞ւ չէ. բայց տեսէ՛ք, դեռ սակաւը լիքն է, պէտք է բոլորը ծախել:
- Լաւ ուրեմն, ծախի՛ր պրծիր և յետոյ ե՛կ ինձ մօտ:
- Գժուար՛, պարոն. ծախելուց յետոյ պիտի մինչև կէսօրին հաշիւ տանել սալ հացադործին:
- Ուրեմն կէսօրից յետոյ եկ, ասացի ես:

վերստին բանտարկուած են և իրենց հարցաքննութիւն կը կատարուի Բ. Դրան պատուիրակ Սիւրեան Էֆէնտիի ներկայութեամբ: Բանտարկուածներէն Պր. Կարապետ Ս.յաւրեան՝ որի տան մէջ գտնուած էին ռուսները, հիւանդացած է ծանրապէս:

Պուլկար կառավարութիւնը ռուսներին խնդրին պատճառով առժամայ կերպով արձակեր է իրենց պաշտօններէ Ռուսուղ-Վառնաի երկաթուղու գծին վրայ աշխատող հետեւեալ 6 հայ պաշտօնեայներն, Պ. Պ. Միհրան Աւետիսեան, Յարութիւն Հէքիմեան, Յակոբ Խաչիկեան, Տիգրան Ինճեան, Յովհաննէս Գարբիէլեան և Տիգրան Պարսամեան, թէև ասոնց վրայ սեւէ յանցանք չէ նկատուած:

Նոր հրատարակութիւններ

Շնորհակալութեամբ ստացած ենք Արմենիայի զրկուած հետեւեալ նոր հրատարակութիւնները.

Դասաւորութիւն Ռոտրիկեան դրամաց գրեց Հ. Կղեմէս Վ. Սիպիլեան: Մէկ լուսանկարատիպ պատկերով, վեց վիմատիպ ճախտակօք (79 պատկեր) 53 Պատկերօք ի բնագրին, որոնց մէջ կան բազմաթիւ չհրատարակեալներ: Վիճենա 1892. Միթիւրեան տպարան: Մեծ ութածալ դիրքով, Ժ+88 +32 երեսներով, թղթակազմի գինն է ճանբու ծախքով 7 Ֆրանկ: (Կիլիկիայի հայ թագաւորների մինչև այժմ գտնուած պղինձ և արծաթ դրամների պատկերները կը ներկայացունէ, ասոնց վրայ պատմական և զբոսայգիական հետաքրքրաշարժ տեղեկութիւններով. արդիւնք հանգուցեալ Հ. Կղեմէս Սիպիլեանի անձամբ կատարած երկարամեայ խուզարկութիւններին: Սկիզբը գրուած է պատկերը Հ. Կղեմէսի որ իր վերջին ճանապարհորդութեան ժամանակ մեռած է Տիգրանակերտի մէջ):

Ընտիր Հայկազունք կաւ լուռք առ Հայկակ. ի Հ. Յովհաննէս վարդապետ թորոսեան. Բ տպագրութիւն: Վենետիկ ի վանս Ս. Ղազարու

- Անկարելի է, պարոն, կէսօրից յետոյ գնում եմ երեկոյեան չայի համար բուրի ծախելու:
- Իսկ երեկոյեան:
- Ետ կուզէի, բայց էլի դժուար է. հազու հաշիւ եք տալիս, չայ խմում ու հաց ուտում, որ պիտի քնել, որպէս զի առաւօտ շատ շուտով գործի սկսուք: Ի՛նչ արած, պարոն, աշխատաւոր մարդիկ եք. . . .
- Լսի՛ր, Պետրո՛ս, ասացի ես ծիծաղելով. մի կարծել թէ ես չը դիտեմ ձեր գործերի ժամերը. դու սուտ ես ասում, որովհետեւ օրուայ մէջ մի քանի ժամ կարելի է գտնել գալ իր հայրենիքիցը լուրեր լսելու համար: Մի ուրիշ պատճառ կայ որի համար չես ուզում գալ. կասե՛ս ինձ այդ պատճառը:
- Նա նախ կարծեց, զլուր կախեց և շփոթութիւնը ծածկելու համար, կատարեց զէպի սակաւը ու սկսեց հայերը ծածկել. բայց երբ նորից բարձրացաւ տեսայ օր զէմքին վրայ ունէր մի գտն ծիծաղ:

(Շարունակելի) Վ. ՓԱՔՍՁԵԱՆՑ

1891. Երես 372 ութածալ, Գին 5 Ֆրանք Վենետիկի մէջ: (Ինչպէս կերելի երեսներ թուէն, այս երկրորդ տպագրութիւն առաջինէն շատ աւելի ընդարձակուած է և պատկերներն ալ աւելի մեծ գիրքով են: Հայց պատմութեան առնուած 26 նշանաւոր անձնաւորութիւնների պատմութիւնները կան նոգեւորիչ ոճով. այդ 26ի պատկերներն ալ առանձին առանձին թղթերի վրայ հանուած են:)

Խորխաւան. Կենսագրական տեսութիւն. գրեց ի. Մարտիան: Սկիզբը գրուած է խորիմեան Հայրիկի պատկերը: Գինն է Թիֆլիսի մէջ 40 կոպէկ: (Խորիմեան Հայրիկի, այդ մեծ մարդի և հայրենասնուէր Հայի, ծննդեան սկսած մինչև Երուսաղէմի մէջ այժմեան ուխտաւորութիւնը վարած կեանքին վրայ մի տեսութիւն է, այնպիսի ոճով գրուած որ իր համառոտութեան մէջ շատ բան կը խօսի: Խորիմեան Հայրիկի մասին ամեն գրուած հետաքրքրութեամբ կը կարգացուի, բայց մանաւանդ երբ գրուածը այս վերջին օրերի ներշնչումների թարմութիւնը կը կրէ և գրուի ալ մին է այն լրագրի աշխատակիցներէն որ խորիմեան Հայրիկի կաթողիկոսական թեմիստութեան ջերմ պաշտպան հանդիսացաւ:)

Լեռն Սարգսեան. Ժողովրդի կրթութեան գործը մեզուում. Մուկուա. Տպարան Մկրտիչ Բարխուդարեանի. 1892. Երես 42. Գինն է Թիֆլիսի մէջ 20 կոպէկ: (Ռուսիայի հայ վարժարանների և վարժապետների այժմեան կացութեանը վրայ մի տեսութիւն է. հետաքրքրութեան արժանի վիճակագրական տեղեկութիւններով:)

ԿԱՂՁՈՒԱՆ ԲԱՆՏԱՐԿՈՒՄԸ ՀԱՅԵՐԻ ԴՍԱՍՏԱՆԸ

(Շար. 83րդ քուսն)

Կարս, 14/26 մայիս 1892

Ապրիլ 30ից (12 մայիս) մինչև առաջ 3/15ը դատարանում մեղադրող Սուրբի կարգաց իր ճառը, որի մէջ ամեն ճիշդ էր թափում հաւատացընելու դատարանին թէ

«Կարանաւորուած հայ խումբը աւազակային խումբ է. նա Ռուսաց տէրութեան ընդդէմ էր գործում. . . . Առհասարակ Անդրկովկասի ամբողջ հայ տարրը, որը գրգռուած է Ռուսաց հզօր պետութեան դէմ, աշխատում է յեզափոխական միջոցներով ազատուել և ստեղծել իր համար մի ինչ որ անկախ իշխանութիւն. . . . Հայ ազգը ընդհանրապէս վատ ազգ է, անհուստարի՛վ է եղած և է թէ՛ մեր և թէ՛ Տաճկաց տէրութիւններին: Քրդերն և Թուրքերն ճշմարտութեամբ վկայեցին, դատարանը պէտք է նրանց ասածներին հաւատայ և ոչ թէ առաջիկայ և կրօնաւոր Հայերին: Ճշմարտութեան հայ վկայներն են միայն երեք Հայ, Հայի թաթարը, Տէր Մարտիրոսովը և բանտապետ Սմաւոնին. առաջին երկուսը իրանց յուցումներով, իսկ վերջինս կուկունեանի մաս գտած նամակներով և

տակին բանտաքրդեր կը լին յանց կայն տաւոր և թու ու փո շեղու մէջ և մնու անմեղ անմեղ որից նոյն խոսակ է ներին անդա խակա թիւն կարծ կութի նուր թիւն էր կարս անցիկ րը հա րանք զի գր թիւն նշանա որ նր ւաքու նպատ հողի Տաճկա քերը են և լուրեր են հո նեն ուշադ ասեցի թիւն նում. տեսէ չաւա թեան սերը ըի գր թիւն կանու իբրե 26նք նշանա որովհ տուած րանց Հայեր Պետք դառն Այո՛ւ, մարդ մը Ա սպան Պ պանե սէրնե սոյ 3 լով մ

Հայերը այդ տեսակ տեղեկութիւններէ համեմատ գործելով և ազոնց մատին խօսելով, մահամտականներէ հետ քրեանց յարաբերութեանը մեծապէս կը քննան: Շատ գիւղերի եթէ ոչ ամենի մէջ, կասկածի և անվստահութեան մի սգի մտած է երկու ցեղերին մէջ և մի քանի տեղերի ինչպէս որ Աշուցիք և իջմէ գիւղերի մէջ, մահամտականները մինչև իսկ սպառնացան ոտք մընել և ջարդել քրիստոնեայները: Գլխի թիւրքերը փորձեցին Քիւրքերը գրգռել Հայերի դէմ: Բայց չը յաջողեցին, երկու շարժ ռուսի իրենց թաղերի մէջ հաւաքուցան մեծ քաղմութեամբ և գրգռու տուին որ բոլոր մահամտականները գան միանան քրիստոնեայները ջարդելու, և ինչ ըսին որ ազոնք հրացան պարպել սկսան և գործն այնքան առաջ տարին որ քրիստոնեայները իրենց վերջ եկած համարեցին, ուստի և իրենք ալ զինւածացան և սպասեցին: Բայց ոչինչ պատահեցաւ: Անտարակոյս մտքերի այս յուզեալ վիճակին մէջ ունէ մի փոքր շփոթ կրնայ ստակալի հետեւանքների յանգիլ:»

Ես նկատել կուտամ միայն որ նըմանօրինակ տեղեկութիւններ ուրիշ աղբիւրներէ ալ հասած են ինձ: Ուստիսիցի կամ ուրիշ տեղացի ծպտեալ Հայեր այս կողմեր գործունեայ կերպով կաշխատին յուսակաբար Հայերը ապստամբութեան մը գրգռելու: Բայց ակնհայտ է որ այդպիսի մի քայլ ծայրայեղ յիմարութիւն կը լինի իրենց կողմէ և ուրիշ արդիւնք չունենար, եթէ ոչ ինքզինքնին ենթարկել մի վտանգի որի ծանրութիւնը ոչ ոք կրնայ հաշուել:

Եմ Զեր ևն.
ԹՈՂՄԱՍ ՊՕՅԱՃԵԱՆ
(Շարունակելի)

ՄԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

Ինչպէս ասին լրագրիւններ, Արմեցիան ալ կընդունի ծանուցումներ հրատարակելու համար: անոնք որ պէտք կուենան Արմեցիաի միջոցով մէկի գիւմում անել կամ մի բան յայտարարել, պատրաստ ենք ընդունել իրենց ծանուցումներ ըստ լրագրական սովորութեան: Ծանուցումներ գիւմում նշանակուած են Արմեցիաի հակառակ, տարին վրայ հաշուելով: 1 երկաթագրի (գլխագիր) համար 2 սանթիմ և 1 բորբոքի համար 1 սանթիմ: 3 անգամ գրուելիք ծանուցում գիւմում վրայ ջրին 10 զեղչ կը լինի: 10 և աւելի անգամներ գրուելիք ծանուցում գիւմ վրայ 0/0ի 30 զեղչ: Սակարկութիւն չընդունուիր:

Հետեւեալ գիրքերն կարելի է ստանալ Արմեցիաի խմբագրատունէն, իրենց առջեւ նշանակուած գիներով և փոստի ծախքը խմբագրատունէն վճարուելով:

- Արժէքը կանխիկ չվճարուած գիրք չըկուիր:
- ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ
- Ա. ՀԱՅ ԳԻՒՑԱԶՆՈՒՅԻ ՄԸ (Սպառած):
- Բ. ՀԱՅ ԳԻՒՂԱՅԻ »
- Գ. ՍԱԳՄԱՍ ԻՐԱՍԵՒԼԻ »

Գ. ԱԶՍՏՈՒԹԻՒՆ ՊՈՒԼՂԱՐԻՈՅ ԵՒ ԿԵՆՍՈՒԳՐՈՒԹԻՒՆՔ ՊՈՒԼՂԱՐ ԱՊՍՏԱՄԲԱՊԵՏԱՅ (Պուլղար ազգին իր ազատութիւն ձեռք բերելու համար մէկ դարէ ի վեր արած ջանքերի խիստ հետաքրքրաշարժ նկարագրութիւնն է: (1 Ֆր. 10 սանթիմ) 1 Ֆր. 50 սանթիմ.

Ե. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹՇՈՒԱՌՆԵՐԸ.—(Հայաստանցիների պանդխտութեան տխուր հետեւանքների մէկ փոքրիկ պատկերը կը ներկայացունէ վիպական կերպով: Գին (90 սանթիմ) 1 Ֆրանք 20 սանթիմ.

Զ. ԳՈՄԱՒԱ ՔԱԹՈՒՊ — ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ յետ այլուքէն անարտելուն (Մեծանուն հայ բանաստեղծին վերջերս գրած ազատաշունչ ընտիր ոտանաւորներէն 3ը՝ առանձին պետրակով հրատարակուած են): 50 հատը 2 Ֆր. և 50 սանթիմ, հատը (5 սանթիմ) 10 սանթիմ:

Է. ԼԻՆՁԻ ՕՐԵՆՔԸ ՏԱՃԿԱՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. (Սպառած)

Ը. ԹԻՒՐԿԻԱԻ ՀԱՅՏԵՐՆԵՒ ԻՐԵՆՑ ԴՐԱՑԻՆԵՐ (Թիւրքիայի Հայերին և իրենց դրացի ազգերի վրայ վիճակագրական և ցեղաբանական ամփոփ և հետաքրքրաշարժ տեղեկութիւններ կը պարունակէ: Թիւրքահայաստանի մէջ բընակող այլ և այլ ազգերէ բնակիչներին թուին բաղդատական մէկ ցուցակն ալ կցուած է տեղական վերջը: Գին 50 սանթիմ (35 սանթիմ):

Թ. «ԱՐՄԵՆԻԱ»Ի ՅՈՒՇԱՐԱՐ (Արմեցիայի Ա տարեշրջանի թիւերը այժմ բոլորովին սպառած և միեւնոյն ժամանակ շատերի հետաքրքրութեան առարկայ դարձած լինելով, այդ շրջանի մէջ Մ. Փորթուգալեանի գրած առաջնորդող յօդուածներէն գէթ 30ի չափ ամփոփուած են Յուշարարի մէջ որ ութածալ դերքով 124 երեսներէ կը բաղկանայ): (1 Ֆրանք) 1 Ֆր. 40 սանթիմ

Ժ. ՎՐԷԺ (Պուլղարիաի մէջ Թիւրքերի արած բարբարոսութիւններէն մի փոքրիկ պատկեր կը ներկայացունէ և ցոյց կուտայ թէ Պուլղարներն ինչպիսի միջոցներով դիմած են իրենց վրէժ լուծելու համար): (15 սանթիմ) 20 սանթիմ.

ԺԱ. ԹՈՄՍԱ ԲՈՅԱՐԻՍ (Յունաստանի մէջ Թիւրքերի արած բարբարոսութիւններէն մի փոքրիկ պատկեր կը ներկայացունէ և ցոյց կուտայ թէ Յոյներն ինչպիսի միջոցներով դիմած են իրենց վրէժ լուծելու համար), (0,15սանթիմ) 20 սանթիմ:

ՃԲ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

ՆՄՈՅՇՆԵՐ

Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ ԳՐԱԾՈՒՆՆԵՐԻ ՈՍՏԱՆԱՒՈՐՆԵՐԷՆ

Մ. Փորթուգալեանի գրած հայրենասիրական ոտանաւորներէ մի քանին ամփոփուած են այս տետրակի մէջ իրեն նմոյշներ զանազան քաղաքների

մէջ և զանազան տպաւորութիւնների տակ իւրերբեմն գրած ոտանաւորներին որոնք ժամանակին հրատարակուած չը լինելով կորսուած են այժմ: Այն մի քանի ոտանաւորներ որոնք իրեն նմոյշ ամփոփուած են այս տետրակի մէջ, ցիր և ցան կը գտնուին Կ. Պօլիս տպագրուած ազգային երգարաններին մէջ՝ որոց վերստին տպագրութիւնն վաղուց արդէն արգիլուած է, և Ասիա և Արմեցիա լրագիրներին մէջ: Նմոյշների մէջ փոքրիկ տեղեկութիւններ տըրւած են նաեւ թէ այդ ոտանաւորներ ինչ տպաւորութիւնների տակ ներշնչուելով գրուած են: Գին (10 սանթիմ) 15 սանթիմ:

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ Ս. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՎԱՐԴԱՊԵՏԱՐԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶՍՈՒԹԵԱՆ

Բ. Տպագրութիւն «Հայոց Հայրենասիրական Միութեան» հրատարակած այս վարդապետարանի մէջ համառօտ կերպով բացատրուած է թէ իւրաքանչիւր հայրենասէր Հայ ինչ փափաքներ պէտք է ունենայ և ինչ պարտքեր ունի կատարելու: Կը խնդրուի ամեն հայրենասէր Հայեր իրենց շրջանի մէջ տարածել այս տետրակ: Մէկ անգամէն 50 օրինակ ծախու առնողին կը զրկուի 5 Ֆրանքով Հատին գինն է 15 սանթիմ (Պարսկաստանի Հայերին համար 10 սանթիմ):

ԻՄ ՀԱՅՐԱՍՊԱՆ ԸՆԿԵՐԸ

(Կ. ՊՈԼՍՈՑ ՀԱՅՈՑ ԿԵՆՏՐՔԷՆ ԱՌՆՈՒՄՍ Ի ԻՐԱԿԱՆ ՎԷՊ) ՔՐԵՑ ԱՊԼՂԱԲԻՊ

Այս հետաքրքրաշարժ գրուած կը ներկայացունէ ընտանեկան տխուր պատկերներէ մին ուր կը տեսնուի թէ անբարոյական մի հայր իւր ապականուած վարքուբարքով որչա՞փ չարիքների պատճառ դարձած է և վերջ ի վերջոյ ինք ալ իւր որդու ձեռքով սպաննուած և անհետացած է աշխարհէ: Գին 1 Ֆրանք, (75 սանթիմ):

Մ. Փորթուգալեանի հրատարակած գիրքերին վրայ մասնաւոր գեղջ կը լինի Պարսկաստանի Հայերին համար որոնց կը զրկուի փակադ ծի մէջ նշանակուած գիներովն:

ԾԱԽՈՒ ԳԻՐՔԵՐ

Արմեցիաի խմբագրատան մէջ ծախու կը գտնուին, ի միջի այլոց, և հետեւեալ գիրքերն որոց գիներն նշանակուած են, զրկուի փոստի ծախքն ալ միասին սաշուելով:

Վ. Փափագեանց—Խաթ-Սարա Հայրոջաների կեանքից) 35 սանթիմ: Վ. Փափագեանց — Ճգնաւոր Եղօ (Թիւրքահայերի կեանքից) 35 սանթիմ:

Շիրվանգատե — Գործակատարի յիշատակարանից (մի պատկեր վաճառականական կեանքից) և հրգեհ նախա գործարանում (Բագուի մշակների կեանքից) 1 Ֆրանք 75 սանթիմ:

Գաբրիել Եպ. Այվագեան—Արեւն ու մոլորակները (Հարան կենցաղագուտ գիտելեաց) 35 սանթիմ: Նոյն—Եղիպտոսի հնութիւնները 35 սանթիմ: Նոյն—Մեծն Ներսէս Հայրապետ 35 սանթիմ:

Մանկուցի—Այրի վանք կամ Գեղարքայ վանք 35 սանթիմ:

Վարդուկեան—Դայլայիկ (Գրաբար ոտանաւորներ՝ արարչագործութեան հրաշալիքներին վրայ) 75 սանթիմ: Չայնագրեա Երգեցողութիւնք Ս. Պատարագի—Բ սիւպ. Ելմիածին 10 Ֆր:

Վ. Փափագեանց—Պատկերներ Թիւրքահայերի կեանքից (Հեղինակին 11 հատ ամենաընտիր վէպիկները): 4 Ֆրանք:

Ասոնցմէ զատ, Արմեցիայի խմբագրատան մէջ ծախու կը գտնուին նաեւ Հ. Ալիշանի, Հ. Ինճիճեանի, Հ. Գորբգին Զարհանէլեանի, Բաֆֆիի, Մեքենցի հրատարակուած բոլոր գիրքերն, ինչպէս և ուրիշ օգտակար գիրքեր և քարտէզներ Հայաստանի՝ հայերէն կամ լատինական ճառերով և զանազան գիւմերով և ինչ ևն:

Գրավաճառանոցի մանրամաս ցուցակը որ 90 երեսներէ կը բաղկանայ, ցանկացողներին կը զրկուի ձրիապէս:

ԾԱԽՈՒ ԳԻՐՔ ԵՒ ՊԱՏԿԵՐ

Հ. Յ. Վ. Խաւիթրոնեց. Կրթարան անդլիական լեզուի (Անգլիերէն լեզուն գիւրին և գործնական ոճով սովորեցունող քերականութիւն մ'է հրահանգներով մէկտեղ): Ա հատորը կը բաղկանայ 256 երեսէ և Բ հատորը 216 երեսէ: վերջն ալ յաւելուած մը կայ 50 երեսէ բաղկացած որ հայերէն հրահանգների անգլիերէն թարգմանութիւնն է: Երկու հատորը միասին 5 Ֆր.: (1 տողը ամերիկեան):

Նշանակք Հայաստանեայց Մայր Հայաստանի պատկերը՝ Հայոց և թաղաւորութիւնների նշանակներովը մէկտեղ փայլուն թղթի վրայ և կանաչ կապոյտ և դեղին գոյներով ներկուած: 1 Ֆրանք:

ՏՆՕՐԷՆ—ԽՄԲԱԳԻՐ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Le Gérant: FÉLIX ENFFANTIN. ՄԱՐՍԵՅԼ Հայերէն տպարան Մ. Փորթուգալեանի

Marseille. — Imprimerie du Midi, et Papeterie Allées de Meilhan, 44.